Նանա Իոսելիանի
Սոֆիո Քեբուրիա

1

Արվեստ

Աշակերտի գիրք

Երաշխավորվել է Վրաստանի կրթության և գիտության
նախարարության կողմից, 2023 թվականին։

 სულაკაურის
გამომცემლობა

Արվեստ 1
Աշակերտի գիրք

Հեղինակներ՝ **Նանա Իոսելիանի, Սոֆիո Քեբուրիա**

Խմբագիր՝ **Վերիկո Էնուքիձե**
Դիզայներ՝ **Իա Մախաթաձե**
Տեխնիկական դիզայներ՝ **Գիորգի Լոմսաձե**

Առաջին հրատարակություն, 2023
© Սուլակաուրիի հրատարակչություն, 2023
Բոլոր իրավունքները պաշտպանված են։

ՍՊԸ «Սուլակաուրիի հրատարակչություն»
Հասցեն. Դավիթ Աղմաշենեբելիի 150, 0112
Հեռ.՝ 291 09 54, 291 11 65
Էլ-փոստ՝ info@sulakauri.ge

ISBN 978-9941-37-430-2

ART 1
Student’s Book

© Sulakauri Publishing, 2023
all rights reserved.

Tbilisi, Georgia
www.sulakauri.ge

Բովանդակություն

Ինչ անհրաժեշտ կլինի մեզ 4

1. Արվեստի աշխարհը 6

2. Ես արվեստագետ եմ. 10

Գծերի և գույների թագավորություն

3. Գծերի թագավորություն. 14

4. Արվեստանոց 16

5. Նկարում ենք երաժշտություն 18

6. Նկարում ենք գունավոր գծերով 20

7. Երեք հրաշագործները 22

8. Բաղադրյալ գույներ. 24

9. Գույների ձայնը. 26

Ի՞նչ սովորեցի: 28

Ո՞վ է մեզ նայում նկարից:

10. Ժամանակ չունեմ: Ես խաղում եմ: 32

11. Գիծ և տրամադրություն. 34

12. Երկու ընկեր 36

13. Դիմանկար 38

14. Ինքնադիմանկար 40

15. Տխրություն ուրախ գույներով. 42

16. Ի՞նչ գույնի է ուրախությունը: 44

17. Արվեստանոց. 46

18. Փոքրիկ ընկերները 48

19. Շրջանակ. 50

Ի՞նչ սովորեցի: 51

Ձմեռ պապի արվեստանոցը

20. Ամանոր է գալիս:. 54

21. Զվարճալի ձևեր 56

22. Արվեստանոց. 58

23. Թվային նկար. 60

24. Ամանորյա զարդարանքներ 62

25. Տոնածառ. 64

26. Շնորհավորական բացիկ 66

Ի՞նչ սովորեցի: 68

Բնությունն իմ շուրջը

27. Բնապատկեր 72

28. Գիշերային բնապատկեր 74

29. Ձմեռային բնապատկեր.. 76

30. Նկարենք ծով 78

31. Նկարենք սար 80

32. Նկարենք անտառ 82

33. Արվեստանոց. 84

Ի՞նչ սովորեցի: 86

Կենդանի բնություն

34. Նախնիների պատմությունները. 90

35. Քանդակ 92

36. Ինչի՞ց է պատրաստվում քանդակը: . . . 94

37. Ապլիկացիա 96

38. Թղթե քանդակ 98

Ի՞նչ սովորեցի: 100

Հիշենք 102

Ես արդեն գիտեմ 104

Ինչ անհրաժեշտ կլինի մեզ

գունավոր կավիճ

գունավոր մատիտներ

գուաշ

ջրաներկ

ֆլոմաստեր

պաստելներ

ստվարաթուղթ



նկարչության տետր

գունավոր թուղթ և մկրատ

պլաստիլին

սպունգ

մատիտ



քանոն

ստվարաթղթի գլանափաթեթ

ներկապնակ

սոսինձ

1. Արվեստի աշխարհը



քանդակագործ

Ի՞նչ է արվեստը։
Ի՞նչ են ստեղծում
արվեստագետները։

նկարիչ

քանդակ

նկարչություն

Գուշակի՛ր.
Ո՞րն է քանդակ։
Ո՞րն է նկար։

Արի՛ ներս նայենք արվեստագետի արվեստանոց։
Ինչո՞վ է նկարում նկարիչը։
Ինչո՞վ է կերտում քանդակագործը։

մատիտներ

պլաստիլին

գունավոր թղթեր

նշիչներ

ջրաներկ

մոմե մատիտներ

գուաշ

Սա ներկապնակ է։ Ներկապնակի վրա բաց են անում և իրար են խառնում ներկերը։

2. Ես արվեստագետ եմ

Քո ձեռքերով շատ բան կարող ես ստեղծել։

Սա մարդու հնագույն նկարած է։

1. Նկարի՛ր

Նկարի՛ր նկար քո ձեռքի դրոշմով։
Ի՞նչ կկցանկարես դրոշմին։
Ի՞նչ ստացվեց։

ընձուղտ

ութոտնուկ

ձուկ

փիղ

թուխս և ճուտիկներ

ծաղիկ



Ալեքսանդր Քոլդեր



Գծերի և գույների թագավորություն

3. Գծերի թագավորություն

Նկարելը սկսվում է գծեր քաշելով։
Նկարը գծերի թագավորություն է։

Էլլա Ցուցքիրիձե

1. Դիտարկի՛ր

Ինչպիսի՞ գծեր ես տեսնում։

ուղիղ

ընդհատվող

ալիքաձև



կորագիծ



գալարագիծ

զիգզագ

2. Վարժություն

Արտագծի՛ր գծերը։

Գծերը տարբեր բնույթ ունեն

3. Դիտարկի՛ր

Գտի՛ր գծեր. չարաճճի, զայրացկոտ, հանգիստ, սեթևեթող ...

4. Վարժություն

Նկարի՛ր տարբեր բնույթի գծեր։
Գծերին անուններ տո՛ւր։
Ինչպիսի՞ գծեր կնկարես, երբ զայրանում ես։
Ինչպիսի՞ գծեր կնկարես, երբ ուրախ ես։

4. Արվեստանոց

1. Դիտարկի՛ր

Գտի՛ր և արտանկարի՛ր գիծը.

- ալիքաձև
- ընդհատվող
- զիգզագ
- ուղիղ
- գալարագիծ

2. Պատասխանի՛ր

- Մտածի՛ր որևէ պատմություն։
- Ի՞նչ պատահեց գծի հետ։





Վասիլի Կանդինսկի

Այս նկարը գծերի իսկական թագավորություն է:
Գծերը զբոսնում են, զրուցում, կռվում, պարում:

3. Նկարի՛ր

Ստեղծի՛ր գծերի քո պատկերացրած թագավորությունը:

- Ինչպիսի՞ գծեր են ապրում քո թագավորությունում:
- Ո՞րն է չարաճճի գիծը:
- Ո՞րն է ծույլ գիծը:
- Գծերին անուններ տուր:

5. Երաժշտություն ենք նկարում

Եթե երաժշտությանը համընթաց ձեռքերդ շարժես, օդի մեջ անտեսանելի գծեր կնկարվեն։

Վասիլի Կանդինսկի

1. Դիտարկի՛ր

Նայի՛ր նկարներին.

- Գտի՛ր հիմական գիծը։
- Աչքերով հետևի՛ր գծերին։
- Փորձի՛ր երգել՝ ինչպիսի՞ ձայն կունենան նրանք։
- Ո՞ր գիծն է ծվծվան, իսկ ո՞րը՝ թավ։
- Ո՞ր գիծն է ամենալուռը, որը՝ ամենաբարձրաձայնը։



Վասիլի Կանդինսկի

Խոան Միրո

2. Պատասխանի՛ր

Ինչպիսի՞ երաժշտություն կսազի այս նկարին.

- Արա՞գ, թե՞ դանդաղ:
- Բարձրաձա՞յն, թե՞ լուռ:



Խոան Միրո

3. Նկարի՛ր

- Լսի՛ր երաժշտությունը:
- Ձեռքերդ շարժի՛ր մեղեդու հետ:
- Ինչպիսի՞ գծեր են գծվել օդում:
- Գծի՛ր այդ գծերը թղթի վրա:

6. Նկարում ենք գունավոր գծերով

Գծեր կարող եք նկարել մատիտով, նշիչով, պաստելով, ներկոտ վրձնով, կավճով:



մատիտ

նշիչ

վրձին

1. Վարժություն

Տարբեր նյութերով գծի՛ր զանազան գծեր:
Ի՞նչ ստացվեց քեզ մոտ:
Ո՞ր նյութը հավանեցիր և ինչո՞ւ:

Պաբլո Պիկասո

2. Դիտարկի՛ր

- Ինչպիսի՞ գծեր ես տեսնում։
- Գտի՛ր գիծը. բարակ, հաստ, ոլորուն։
- Ո՞ր գիծն է բաց գույնի, ո՞րը՝ մուգ։

3. Նկարի՛ր

Քեզ համար ցանկալի նյութով, օգտագործելով ուրախ գույներ, նկարի՛ր ուրախ նկար։

7. Երեք հրաշագործները

Կարմիրը, դեղինը և կապույտը հիմնական գույներն են: Այս երեք գույներն իրար խառնելով կարող ես ստանալ ուրիշ գույներ:



1. Պատասխանի՛ր

Ո՞ր գույներն են իրենց համար տեղ գտել կարմիր, դեղին և կապույտ գույների միջև:

Ալեքսանդր Քոլդեր

2. Պատասխանի՛ր

- Ի՞նչ գույներ ես տեսնում:
- Ինչպիսի՞ գույներ ես տեսնում:
- Ի՞նչ տրամադրություն է այս նկարներում՝ ուրա՞խ, թե՞ տխուր.

3. Նկարի՛ր

Տարբեր գծերով և երեք հիմնական գույնով նկարի՛ր ուրախ նկար:

8. Բաղադրյալ գույներ

1. Դիտարկի՛ր

Նայի՛ր ծիածանին.

- Ի՞նչ գույներ ես տեսնում:
- Որո՞նք են հիմական գույները:

Բաղադրյալ գույները ստացվում են հիմական գույներն իրար խառնելով: Բաղադրյալ գույներ են **մանուշակագույնը, կանաչը և նարնջագույնը:**

Հիմական գույներ

Գունաշրջան

Բաղադրյալ գույներ

2. Պատասխանի՛ր

- Ի՞նչ գույներ խառնելով են ստացվում բաղադրյալ գույները:
- Ինչ ես կարծում, ինչո՞ւ են դրանք կոչվում բաղադրյալ գույներ:



3. Դիտարկի՛ր

Կատարի՛ր փորձ.
Ուշադիր դիտի՛ր նմուշը։
Ջրի մեջ կաթեցրո՛ւ հիմնական գույնի ներկեր։
Ի՞նչ կպատահի։

4. Դիտարկի՛ր

Գտի՛ր սխալը.

1. ● + ● = ●
2. ● + ● = ●
3. ● + ● = ●
4. ● + ● = ●
5. ● + ● = ●
6. ● + ● = ●

5. Նկարի՛ր

Սև նշիչով նկարի՛ր փուչիկներ, այնպես, որ փուչիկներն իրար հատեն։
Գունավորի՛ր փուչիկները հիմնական գույնի գունավոր մատիտներով։
Ի՞նչ գույներ ստացար հատման տեղերում։

9. Գույների ձայնը

1. Դիտարկի՛ր

- Ո՞ր գույնն է փսփսում:
- Ո՞ր գույնն է աղաղակում:
- Ինչպիսի՞ ձայն ունեն բաց գույները:
- Ո՞ր գույնի ձայնն է ամենից թավը:

Վասիլի Կանդինսկի

Համարվում է, որ ամեն գույն իր ձայնն ունի: Գույնի ձայնը կարող է լինել **լուռ և բարձր, բարակ կամ թավ:**

Վասիլի Կանդինսկի

Այս նկարում գծերն ու գույները հավաքվել են միասին։

2. Պատասխանի՛ր

- Ինչպիսի՞ն կլիներ նկարը առանց գծերի։
- Ի՞նչ են հաղորդել գույները գծերին։
- Ի՞նչ ձայներ են լսվում այս նկարում։

3. Վարժություն

- Աղաղակող կամ լուռ, բաց կամ մուգ գույներով նկար նկարի՛ր։ Դիտի՛ր քո նկարը, որ նկարն է աղաղակում՝ բա՞ց գույնի նկարը, թե՞ մուգ գույնի։

Ի՞նչ սովորեցի

Նկարում ենք տրամադրություն

Նկարի՛ր ուրախ կամ թախծոտ նկար

- Փոխանցի՛ր քո տրամադրությունը հիմական, բաղադրյալ, բաց կամ մուգ գույներով:
- Տրամադրությանը համապատասխան օգտագործի՛ր տարբեր տեսակի գույներ:

- Հիշի՛ր՝ ինչպիսի՞ գույներ գոյություն ունեն:
- Ինչպիսի՞ գծեր գոյություն ունեն:

Ցո՛ւյց տուր աշխատանքդ ընկերներիդ և պատմի՛ր նրանց.

- Ի՞նչ տրամադրություն է փոխանցված քո նկարում:
- Ի՞նչ գույներ ես օգտագործել:
- Ո՞ր գույնն է զվարճալի դարձրել քո նկարը:
- Ո՞րը ստեղծեց թախծոտ տրամադրություն:
- Ո՞ր գույնն է աղաղակում, և ո՞րն է լուռ:
- Ինչպիսի՞ գծեր ես գծել:
- Ո՞րն է ամենաուժեղը, ամենաթույլը, չարաճճին, բարկացկոտը:
- Ի՞նչն է քեզ դուր գալիս քո աշխատանքում:



Աշակերտի նկար



Աշակերտի նկար

Բերտա Մորիզո

Ո՞վ է մեզ նայում նկարից։

10. Ժամանակ չունեմ, խաղում եմ

Պաբլո Պիկասո

1. Դիտարկի՛ր

Նկարներում գտի՛ր. ձին, թիթեռ բռնելու ցանցը, նավակը, ծաղիկը։

Ժամանակ չունեմ, նկարում եմ:

Պաբլո Պիկասո

2. Պատասխանի՛ր

- Ի՞նչ է նկարել նկարիչը:
- Ի՞նչ են անում երեխաները:
- Ինչպե՞ս է նկարիչը մեզ ցույց տվել այն, ինչ նրանք սիրում են:
- Ինչպիսի՞ գծեր ես տեսնում:
- Ի՞նչ տրամադրություն են ստեղծում գույները:

3. Նկարի՛ր

Նկարով ցո՛ւյց տուր մեզ, թե ինչ ես անում, երբ ժամանակ չունես:

11. Գիծ և տրամադրություն

Նկարիչը գծերով ցույց է տալիս մարդու բնավորությունը։

Պաբլո Պիկասո

1. Գտի՛ր

Գտի՛ր գծերը.

- ուղիղ,
- ոլորուն,
- զիգզագ,
- ալիքաձև,
- նուրբ,
- կոպիտ։

Պաբլո Պիկասո

2. Դիտարկի՛ր

Ուշադիր դիտի՛ր մարդկանց.

- Ո՞րն է տխուր։
- Ո՞րն է ուրախ։
- Ո՞րն է բարկացկոտ։
- Ինչպե՞ս կռահեցիր։

3. Նկարի՛ր

Մատիտով նկարի՛ր զայրացած և ուրախ մարդկանց։ Ինչպիսի՞ գծեր կսազեն այսպիսի բնավորությանը։

12. Երկու ընկեր

Գիծը երբեմն նուրբ է, երբեմն՝ կոպիտ։ Գույնը կա՛մ բաց է, կա՛մ մուգ։

Գիծն ու գույնը ընկերներ են։

Նրանք ի՞նչ կարող են անել միասին։

Տրաուգոտ եղբայրները

1. Դիտարկի՛ր

Պատկերացրո՛ւ այս նկարներն առանց գծերի։

- Ի՞նչ կտեսնեիր։
- Նկարչին ինչի՞ համար պետք եկան գծերը։
- Ինչպիսի՞ն կլինեն այս նկարներն առանց գույների։

2. Նկարի՛ր

- Մատիտով մարդ նկարի՛ր։
- Նկարը գունավորի՛ր ջրաներկով։

Ջրաներկ

Գաստոն Շեսակ

3. Պատասխանի՛ր

- Ինչպիսի՞ գծեր ես տեսնում:
- Ի՞նչ գույներ ես տեսնում:
- Ինչո՞վ են իրար օգնում գծերն ու գույները:

4. Նկարի՛ր

Գունավորի՛ր ստվարաթղթե գլանափաթեթը գուաշի ներկերով: Ամենալուսավոր բծի մեջ նկարի՛ր ուրախ դեմք:

Ստվարաթղթե գլանափաթեթ

Նշիչ

Գուաշի ներկեր

Նմուշ

13. Դիմանկար

Սրանք դիմանկարներ են։

Դիմանկարը մեզ պատմում է, թե ինչպիսին է մարդը։

Մերի Կասատ

1. Դիտարկի՛ր

- Ի՞նչ ես տեսնում նկարներում։
- Բնութագրի՛ր երեխաներին։

Բերտա Մորիսո

2. Պատասխանի՛ր

- Ի՞նչ է անում աղջիկը:
- Դեպի ո՞ւր է նայում:
- Ինչպիսի՞ դեմքով է նա նայում:
- Ինչո՞ւ ես այդպես կարծում:

3. Նկարի՛ր

Գունավոր մատիտներով նկարի՛ր դիմանկար:

- Ի՞նչ կանի քո հերոսը:
- Ի՞նչ գծերով և գույներով կնկարես նրան:

14. Ինքնադիմանկար

Նկարիչները հաճախ նկարում են իրենց:

Սա նկարչի ինքնադիմանկարն է, իսկ կողքին նրա իսկ լուսանկարն է:



Անրի Մատիս

1. Դիտարկի՛ր

Համեմատի՛ր նկարը և լուսանկարը:

Ինչո՞վ է ինքնադիմանկարը նման նկարչի լուսանկարին:



Դեյվիդ Հոքնի



Պաբլո Պիկասո

Ֆրիդա Կալո

2. Դիտարկի՛ր

Գտի՛ր ինքնանկարի հեղինակին. Ինչո՞վ նմանեցրիր լուսանկարը նկարին։

15. Զանձրույթն ուրախ գույներով

Սոնյա Դելոնե, ինքնադիմանկար



Սոնյա Դելոնե, Ֆիլոմենեի դիմանկարը

1. Դիտարկի՛ր

- Ի՞նչ տրամադրություն է այս դիմանկարներում:
- Ի՞նչն է ստեղծում տրամադրություն, գույն կամ արտահայտչականություն:

Սոնյա Դելոնե, ինքնադիմանկար ընկերոջ հետ

Անրի Մատիս



2. Պատասխանի՛ր

- Ի՞նչ տրամադրություն ես տեսնում:
- Ի՞նչն է քեզ մոտ ստեղծել այս տրամադրությունը՝ ձևը, թե արտահայտչականությունը:
- Նկարները խայտաբղե՞տ են, թե՞ միագույն:

3. Դիտարկի՛ր

Դիտի՛ր բոլոր նկարները.
Առջևում մարդն է, նրա ետևում՝ ֆոնը:

- Ի՞նչ է պատկերված հետին պլանում:
- Ո՞ր նկարում է ֆոնը. խայտաբղետ, պարզ, մուգ, բաց:

16. Ի՞նչ գույնի է ուրախությունը:

1. Պատասխանի՛ր

- Ինչպիսի՞ն կլիներ տիեզերքն առանց գույների:
- Ի՞նչ գույնի է երազանքը, ծիծաղը, տխրությունը:

Կիտ Հարինգ

2. Դիտարկի՛ր

- Ի՞նչ է նկարել նկարիչը:
- Ի՞նչ գույներով է այն նկարել:
- Ի՞նչ տրամադրություն է նկարներում:
- Ի՞նչն է ստեղծում այս տրամադրությունը:

Կիտ Հարինգ

Խոան Միրո

3. Պատասխանի՛ր

- Ի՞նչ ես տեսնում:
- Ի՞նչ է նկարել նկարիչը գծերով:
- Ինչպիսի՞ դեմքեր ունեն մարդուկները:
- Ի՞նչ գույներ ես տեսնում:
- Ի՞նչ տրամադրություն են ստեղծում գույները:

4. Նկարի՛ր

Նկարի՛ր ուրախ արարածների.

- Ի՞նչ են անելու նրանք:
- Դեմքի ի՞նչ արտահայտություն կունենան նրանք:
- Ի՞նչ գույներով ես նկարելու:

17. Արվեստանոց

Առաջադրանք 1

- Պատրաստի՛ր գունավոր ֆոն։
- Առանձին թղթի վրա նկարի՛ր մարդ։
- Կտրի՛ր-հանի՛ր նկարը և փակցրո՛ւ ֆոնի վրա։

Առաջադրանք 2

Ուշադիր դիտի՛ր հասակակիցներիդ նկարները.

- Ինչպե՞ս է նախընտրելի դիմանկար նկարելը՝ երկայնակի, թե լայնակի։

ջրաներկ

նշիչ

սոսինձ

Առաջադրանք 3

- Քո սիրելի գույներով պատրաստի՛ր ֆոն։
- Առանձին թղթի վրա նկարի՛ր ընկերոջդ դիմանկարը։
- Ի՞նչ գույնի աչքեր ունի նա։
- Ի՞նչ գույնի մազեր ունի նա։
- Կտրի՛ր-հանի՛ր նկարը և փակցրո՛ւ ֆոնի վրա։

Առաջադրանք 4

- Դիմանկարի համար պատրաստի՛ր ֆոն։
- Պաստելով գծեր տա՛ր։
- Նկարի վրա ջրաներկ քսի՛ր։
- Ի՞նչ տեղի ունեցավ։ Սպասի՛ր, որ ֆոնը չորանա։

պաստել

ջրաներկ

- Առանձին թղթի վրա նկարի՛ր ուրախ դեմք և կտրի՛ր-հանի՛ր։
- Ներկերով արա՛ երկու ձեռքի դրոշմ և կտրի՛ր-հանի՛ր։
- Նախապես պատրաստած ֆոնի վրա փակցրո՛ւ դեմքը և ձեռքի դրոշմերը։

գուաշ

մկրատ

ձեռքի դրոշմ

սոսինձ

պաստելներ

18. Փոքրիկ ընկերները

?

1. Պատասխանի՛ր

- Ի՞նչ պատմեց մեզ նկարիչը:
- Ի՞նչ տրամադրություն է այս նկարներում:
- Ո՞ր գույնն է գլխավորը:
- Ի՞նչ գույնի է ֆոնը:

Մո Նոնգ

2. Դիտարկի՛ր

- Ի՞նչ է նկարել նկարիչը:
- Ի՞նչ գույներով:
- Ինչպիսի՞ գծերով:
- Ո՞րն է ավելի կարևոր՝ գո՞ւյնը, թե՞ գիծը:

Իա Մախաթաձե

3. Նկարի՛ր

Ո՞րն է քո սիրելի կենդանին:
Նկարի՛ր ձեր բարեկամությունը:

Աշակերտների աշխատանքներ

19. Շրջանակ

Ընտրի՛ր քո նկարներից մեկը:
Ի՞նչ շրջանակ կսազի նրան:

Նկարի համար գեղեցիկ շրջանակ պատրաստի՛ր:

սոսինձ

գունավոր թերթեր

- Քո նկարը փակցրո՛ւ մեծ չափի գունավոր թղթի վրա:

- Շրջանակը նկարազարդի՛ր մատիտներով կամ նշիչներով:
  Օգտագործի՛ր տարբեր տեսակի գծեր:

Ի՞նչ սովորեցի

Ինքնադիմանկար

Նկարի՛ր ինքդ քեզ։

Քո արտաքինը փոխանցի՛ր տարբեր գծերով։

Քո սիրելի գույներով փոխանցի՛ր տրամադրություն։

Մանրամասն ցո՛ւյց տուր մեզ, թե ինչ ես սիրում, և ինչն է քեզ հետաքրքրում։

Մտածի՛ր, թե ինչ ես նկարելու ֆոնի վրա։

Նկարի համար գեղեցիկ շրջանակ պատրաստի՛ր։

Մտածի՛ր՝ թուղթը երկայնակի՞ ես դնելու, թե՞ լայնակի։

Ցո՛ւյց տուր նկարը ընկերներիդ և պատմի՛ր նրանց.

- Ի՞նչ ես նկարել գծերով, ի՞նչ ես փոխանցել գույներով։
- Ինչպե՞ս ես փոխանցել նմանությունը։
- Ինչո՞վ ես ցույց տվել մեզ՝ ի՞նչն ես սիրում, ի՞նչն է քեզ հետաքրքրում։
- Ի՞նչ ես նկարել ֆոնի վրա։

Ձմեռ պապի արվեստանոցը

20. Ամանոր է գալիս:

Ո՞վ է ամենաշատը սիրում Ամանորի գալուստը: Իհարկե, երեխաները: Չէ՞ որ Ամանորը նվերների, անակնկալների և ուրախության ժամանակն է:

Իա Մախաթաձե

1. Պատասխանի՛ր

- Ինչպե՞ս ես պատրաստվում Ամանորին:
- Ինչպե՞ս ես գեղեցկացնում միջավայրը տոների համար:

Ամանորը նշվում է ամբողջ աշխարհում: Մենք Ամանորին զարդարում ենք տոնածառ ու չիչիլակի:

չինական լապտեր

տոնածառ

չիչիլակի

Ճապոնական հովհար

չինական վիշապ

հունական խաղալիք

Չինացիները Ամանորը դիմավորում են կարմիր լապտերներով ու թղթե վիշապով: Ճապոնացիները թղթե զարդարանքներ են պատրաստում: Հույները տոնածառի վրա նուռ են կախում, դանիացիները՝ թղթե սրտեր, իսկ ֆրանսիացիները՝ խնձորներ:

2. Նկարի՛ր

Մտածի՛ր և նկարի՛ր տարօրինակ իրերով զարդարված տոնածառ:

21. Զվարճալի ձևեր

Սրանք երկրաչափական պատկերներ են:
Յուրաքանչյուր երկրաչափական պատկեր ունի իր անունը:


քառակուսի


շրջան


եռանկյունի


հնգանկյունի

ուղղանկյունի


օվալ

աստղ

Երկրաչափական պատկերներ կարող ես ճանաչել շատ առարկաների մեջ:

1. Դիտարկի՛ր

- Ի՞նչ ես տեսնում:
- Ի՞նչ երկրաչափական պատկերներ ես ճանաչել:

Ամանորյա զարդարանքները տարբեր ձևեր ունեն։

2. Դիտարկի՛ր

- Լուսանկարը միացրո՛ւ համապատասխան ձևի հետ։
- Նրան անվանում տո՛ւր։

3. Պատրաստի՛ր

- Նկարի՛ր տոնածառի խաղալիք։
- Կտրի՛ր-հանի՛ր նկարը։
- Գունավորի՛ր երկու կողմերից էլ։
- Զարդանկարի՛ր գծերով և սիսեռանախշերով։
- Կախիչ պատրաստի՛ր խաղալիքի համար։
- Կախի՛ր տոնածառի վրա։

22. Արվեստանոց



Պիտ Մոնդրիան

1. Դատողությո՛ւն արա

Նայի՛ր նկարին.

- Ի՞նչ գույներ և ինչպիսի՞ գծեր ես տեսնում:
- Ի՞նչ ձևեր են նկարված գծերով:

2. Պատրաստի՛ր տոնածառի կլոր խաղալիքներ

- Ստվարաթղթե շրջանակ կտրի՛ր:
- Շրջանակի մեջ նկարի՛ր ուղղանկյուններ:
- Շրջանակը երկու կողմերից գունավորի՛ր հիմական գույներով:
- Խաղալիքի համար կախիչ պատրաստի՛ր:
- Ուրիշ ի՞նչ ձևի խաղալիք կպատրաստես:

3. Եռանկյունաձև ձևեր

- Ի՞նչ ձևեր ես տեսնում:
- Ո՞րն է նման տոնածառի:
- Ո՞րն է նման մարդու:
- Եռանկյունաձև ձևերով նկարի՛ր մարդ կամ տոնածառ:
- Կտրի՛ր-հանի՛ր նկարը և վրան կախիչ ամրացրո՛ւ:



Վասիլի Կանդինսկի

4. Պատրաստի՛ր խաղալիք

Նկարիչն այս նկարը նկարել է շրջանակներով: Պատրաստի՛ր նմանատիպ խաղալիք.

- Կտրի՛ր-հանի՛ր տարբեր չափերի գունավոր շրջանակներ:
- Սոսնձի՛ր շրջանակներն իրար:
- Կախիչ պատրաստի՛ր խաղալիքի համար:

Վասիլի Կանդինսկի

23. Թվային նկար

Դու արդեն ծանոթ ես երկրաչափական պատկերներին: Համակարգչային նկարչական ծրագրում երկրաչափական պատկերով նկարի՛ր տոնածառի խաղալիքներ:

1. Սլաքները քեզ ցույց կտան անհրաժեշտ գործիքը:



2. Գունավորի՛ր ձևերը հիմնական գույներով:



3. Գեղեցկացրո՛ւ ձևերը տարբեր գծերով:



4. Ընտրի՛ր վրձին և նկարի՛ր կախիչներ:

5. Աշխատանքը պահի՛ր համակարգչում:

Պատասխանի՛ր

Ուրիշ ի՞նչ կնկարեիր այս ծրագրով:

24. Ամանորյա զարդարանքներ

Թղթե զոլերով և երկրաչափական պատկերներով պատրաստի՛ր ամանորյա զարդարանքներ։

1. Դիտարկի՛ր

Ինչպե՞ս կպատրաստես ձևանմուշի նման զարդարանքներ։



2. Պատրաստի՛ր

- Ըստ նմուշի ձևի՛ր ձյան փաթիլներ։
- Փաթիլները միացրո՛ւ իրար։
- Սենյակը զարդարի՛ր ձյան փաթիլներով։



3. Պատրաստի՛ր

Տոնածառի ուլունք։

- Գույնզգույն թերթերը կտրատի՛ր եռանկյուն շերտերով։
- Լայն ծայրի կողմից շերտերը փաթաթի՛ր փայտե ձողիկի վրա։
- Սոսնձի՛ր եռանկյունու ծայրը։
- Քաշի՛ր-հանի՛ր ձողիկը։
- Ուլունքները շարի՛ր քուղի վրա։



25. Տոնածառ

1. Պատրաստի՛ր

Թղթե տոնածառ։

- Երեք կանաչ քառանկյուն թերթեր ծալի՛ր մեջտեղից։
- Ծալքից դեպի ծայրը նկարի՛ր կես տոնածառ։
- Ձևի՛ր ձևանմուշներ և բացի՛ր։
- Ձևանմուշները սոսնձի՛ր իրար։
- Գեղեցկացրո՛ւ տոնածառը գունավոր սիսեռանախշերով։

2. Պատրաստի՛ր

Տոնածառ ընկերներիդ հետ։

- Գունավոր թերթերի վրա եզրագծե՛ք ձեր ձեռքի ափերը։
- Կտրեք-հանե՛ք և դրանք իրար սոսնձե՛ք տոնածառի ստորին լայն կողմով։ Որքան ավելի շատ դրոշմ կտրեք-հանեք, այնքան փարթամ կստացվի տոնածառը։

3. Պատրաստի՛ր

- Ինչպե՞ս կպատրաստես այսպիսի տոնածառեր:
- Դրա համար ի՞նչ անհրաժեշտ կլինի քեզ:

26. Շնորհավորական բացիկ

Ամանորին նկարիչներն իրենց ընկերներին ուղարկում են իրանց ձեռքով նկարված շնորհավորական բացիկներ։

Սալվադոր Դալի

Պաբլո Պիկասո



Էնդի Ուորհոլ

Ալեքսանդր Քոլդեր

1. Նկարի՛ր

Ընկերներիդ համար նկարի՛ր շնորհավորական բացիկներ։



2. Նկարի՛ր

Սև գծերով և գունավոր ուղղանկյուններով նկարի՛ր տոնածառ:

3. Նկարի՛ր

- Ինչո՞վ կպատրաստես տոնածառի դրոշմվածքը:
- Ինչո՞վ կնկարես Ձմեռ պապին:
- Ինչպե՞ս կնկարես եղևնու փշատերևները:

Ի՞նչ սովորեցի։

Նոր տարի

Քո ձեռքով պատրաստած զարդարանքներով Ամանորի համար գեղեցկացրո՛ւ դպրոցի միջանցքը կամ դասասենյակը։

- Օգտագործի՛ր ստվարաթուղթ, գունավոր թղթեր, ճյուղեր, կոներ, ժապավեններ և այլ նյութեր։
- Պատրաստածիդ տո՛ւր երկրաչափական պատկերի կամ բնության մեջ գոյություն ունեցող ձև։
- Գեղեցկացրո՛ւ պատրաստվածքը տարբեր տեսակի գծերով։

Պատրաստե՛ք հրավիրատոմսեր և հյուրեր հրավիրե՛ք՝ տոնական զարդարված միջավայրը տեսնելու համար։

Ցո՛ւյց տուր աշխատանքիդ արդյունքը ընկերներիդ և պատմի՛ր նրանց.

- Ի՞նչ զարդարանք ես պատրաստել։
- Ի՞նչ նյութեր և տեխնիկա ես օգտագործել զարդարանքը ստեղծելու համար։
- Ինչո՞վ ես գեղեցկացրել հրավիրատոմսը։



Դեյվիդ Հոքնի

Բնությունն իմ շուրջը

27. Բնանկար

Բնությունը բազմազան է։

Նկարիչները տարբեր կերպ են նկարում բնությունը։

Շրջակա միջավայրի տեսարանը կոչվում է բնանկար։

Գիորգի Միրզաշվիլի

Մարտիրոս Սարյան

1. Դիտարկի՛ր

- Ի՞նչ ես տեսնում։
- Ի՞նչ գույներ և ձևեր ես տեսնում։
- Ո՞ր բնապատկերն է նկարված գծերով։

2. Դիտարկի՛ր

- Ի՞նչ է նկարել նկարիչը:
- Այստեղ ցերե՞կ է, թե՞ գիշեր:
- Ո՞ր գույնն է գլխավորը:
- Ո՞ր գույնն է ամենամուգը, իսկ ամենաբա՞ցը:

Անտոն Բալանչիվաձե

3. Նկարի՛ր

Ընտրի՛ր որևէ նկարչի բնապատկեր:
Նկարի՛ր նմանատիպ նկար:

- Ի՞նչը կփոխես:
- Ի՞նչ կավելացնես:

4. Դիտարկի՛ր

Դիտարկի՛ր քո հասակակիցների նկարները:
Գուշակի՛ր, թե որ նկարչին են նրանք ընդօրինակել:

28. Գիշերային բնապատկեր

Ի՞նչն է լուսավորում շրջակա միջավայրը գիշերը:
Ի՞նչ է տեղի ունենում գույների հետ այդ ժամանակ:

1. Դիտարկի՛ր

- Ի՞նչ ես տեսնում:
- Ո՞ր գույնն է գլխավորը: Ինչո՞ւ:
- Ի՞նչ գույնի թղթի վրա է նկարված այս բնապատկերը:
- Ինչո՞ւ է նկարը նկարված սև գույնի թղթի վրա:



Էլենե Ախվլեդիանի

2. Նկարի՛ր

Երբևէ սև թղթի վրա նկար նկարե՞լ ես։

- Սև կամ կապույտ թղթի վրա նկարի՛ր բնապատկեր։
- Օգտագործի՛ր գունավոր պաստելներ կամ կավիճ։



Էլենե Ախվլեդիանի

3. Կատարի՛ր փորձ

- Թերթը գունավորի՛ր մուգ գույնի պաստելի հաստ շերտով։
- Սրածայր ձողիկով վրան գծեր քերծի՛ր։
- Ուրիշ ի՞նչ կնկարեիր նման եղանակով։

29. Ձմեռային բնապատկեր

1. Պատասխանի՛ր

- Ինչպե՞ս է փոխվում շրջակա միջավայրը ձմռանը:
- Ո՞ր գույներն են գերակշռում:

Գոգի Չագելիշվիլի

- Ինչի՞ մասին է մտածում աքլորը:

- Ինչի՞ մասին են խոսում կատուն ու ագռավը:

Գոգի Չագելիշվիլի

2. Պատասխանի՛ր

- Տարվա ո՞ր եղանակն է:
- Ի՞նչ նշանով կռահեցիր:
- Առավո՞տ է, թե՞ երեկո:
- Ի՞նչ են անում երեխաները:
- Ի՞նչ ձայներ են լսվում:
- Ինչի՞ են սպասում ագռավները:
- Ինչպե՞ս է ավարտվում պատմությունը:

3. Նկարի՛ր

Ձմեռվա բնապատկեր:

- Ի՞նչ գույնի ֆոն կընտրես:
- Ինչպե՞ս կնկարես ձյունը:
- Ինչո՞վ կնկարես ձյան փաթիլները:

4. Նկարի՛ր

Դիտարկի՛ր նմուշները և նյութը: Ինչպե՞ս կարող ես նման աշխատանք կատարել:

30. Նկարենք ծով

Նկարիչները շատ են սիրում ծովի փոփոխական բնապատկերներ նկարել։

Կլոդ Մոնե

Վինսենթ վան Գոգ

1. Դիտարկի՛ր

Նայի՛ր ծովի բնապատկերին։
Ո՞ր գույնն է գլխավորը և ինչո՞ւ։
Ի՞նչը գրավեց քո ուշադրությունը և ինչո՞ւ։



Գոգի Չագելիշվիլի

2. Նկարի՛ր

- Սպիտակ և կապույտ ներկով նկարի՛ր ծով։
- Ինչպե՞ս կնկարես ալիքներ և ամպեր։

31. Նկարենք լեռ

1. Դիտարկի՛ր

- Ի՞նչ ձևեր ճանաչեցիր։
- Ի՞նչ է նկարված այս ձևերով։
- Ի՞նչ գույներ ես տեսնում։

Լուիզա Բուրժուա

Ջոն Բեյթս

Դեյվիդ Հոքնի

Նկարիչները բնապատկերներ են ստեղծում նաև համակարգիչներով:

2. Նկարի՛ր

Համակարգչային նկարչական ծրագրում նկարի՛ր բնապատկեր: Օգտագործի՛ր բնության մեջ եղած ձևերը:

- Գունավորի՛ր ձևերը հիմական և բաղադրյալ գույներով և գեղեցկացրո՛ւ գծերով:
- Նկարչական ծրագրում գտի՛ր վրձին, մատիտ և գրիչ:
- Փորձի՛ր, թե ինչպիսի գծեր են նրանք գծում:
- Ձևերը գունավորի՛ր այս գործիքով:
- Փորձի՛ր, թե ուրիշ ինչ կարող է անել նկարչական ծրագիրը:

Նկարչական ծրագրի գործիքներ

32. Նկարի՛ր անտառ

Զբոսնե՞լ ես անտառում։
Տարվա բոլոր ժամանակներին և եղանակին անտառը փոխում է իր գույնը։

Գուստավ Կլիմտ

?

1. Պատասխանի՛ր

- Ի՞նչ է նկարել նկարիչը։
- Տարվա ո՞ր ժամանակն է։
- Ինչպե՞ս կռահեցիր։
- Ի՞նչ գույներով է նկարիչը նկարել աշունը։

2. Նկարի՛ր

Թավախիտ անտառ։

- Թերթը ամրացրո՛ւ ստվարաթղթի կտորի վրա։
- Այն փաթաթի՛ր գործելու հաստ թելով։
- Ներկոտ սպունգով գունավորի՛ր թերթը։
- Թելը հեռացրո՛ւ աշխատանքիդ վրայից։



- Տարվա ո՞ր եղանակը կնկարես։
- Ո՞ր գույներով կնկարես ամառային անտառը։
- Ո՞ր գույներն են գերակշռում աշնանային անտառում։
- Ի՞նչ գույն կունենա ձմեռային անտառը։

33. Արվեստանոց



1. Ապլիկացիա «Բնապատկեր»

- Գունավոր թղթերը կտրատի՛ր ըստ նմուշի։
- Ձևի՛ր բնական ձևեր։
- Նշիչով ձևերի վրա նկարի՛ր ճյուղեր։
- Առանձին թղթի վրա պատրաստի՛ր ֆոն։
- Նկարի՛ր երկնքի և երկրի բաժանարար գիծը։
- Ձևերը փակցրո՛ւ ֆոնի վրա։
- Ծառերին կցանկարի՛ր բուն։
- Նկարի համար շրջանակ պատրաստի՛ր։

2. Անտառային բնապատկեր խառը տեխնիկայով





- Տարվա ո՞ր եղանակը կնկարես:
- Ի՞նչ գույներ կօգտագործես:
- Ներկերով նկարի՛ր ֆոն:
- Կտրի՛ր-հանի՛ր գունավոր ձևեր:
- Գծերով և սիսեռանախշերով նկարի՛ր ճյուղեր և տերևներ:
- Ձևերը փակցրո՛ւ ֆոնի վրա:
- Ուրիշ ի՞նչ կավելացնես անտառային բնապատկերին:
- Նկարի համար շրջանակ պատրաստի՛ր:

Ի՞նչ սովորեցի։

Բնապատկեր

Ստեղծի՛ր բնության տեսարան՝ օգտագործելով տարբեր տեխնիկա։

Քո սիրելի տեխնիկայով ստեղծի՛ր բնապատկեր։ Օգտագործի՛ր մտահղացմանը համապատասխան ձևեր, գույներ և գծեր։

Ցո՛ւյց տուր աշխատանքը ընկերներիդ և պատմի՛ր նրանց.

- Ի՞նչ արեցիր։
- Ի՞նչ և ի՞նչ տեխնիկա ես օգտագործել։
- Ի՞նչ նյութ ես օգտագործել։
- Ի՞նչ գույներ ես ընտրել։
- Ի՞նչ ձևեր ես օգտագործել։
- Ինչո՞վ օգնեցին քեզ գծերը։
- Ի՞նչն էր քեզ համար դժվար։
- Ի՞նչը քեզ մոտ հեշտ ստացվեց։
- Ի՞նչը լավ ստացվեց քեզ մոտ։
- Ի՞նչը կփոխեիր։

Կենդանի բնությունը

34. Նախնիների պատմությունները

Բնությունը շատ կենդանի արարածների տունն է:
Մարդը անհիշելի ժամանակներից դիտարկում էր այն:

Սրանք հնագույն մարդկանց նկարներ են:

1. Դիտարկի՛ր

- Ի՞նչ ես տեսնում:
- Ի՞նչ կենդանիներ ես ճանաչել:

Սրանք կենդանիների հնագույն քանդակներ են։

Մարդու երևակայությունը ստեղծել է նաև առասպելական արարածներ։ Տեսնո՞ւմ ես երկգլխանի քանդակը։ Պարզվում է, երբ նրա մեկ գլուխը քնում էր, մյուսն արթուն էր, այդ պատճառով նրան ոչ ոք չէր կարող բռնել։

2. Ծեփի՛ր

Պլաստիլինով կերտի՛ր որևէ տարօրինակ կենդանու քանդակ։

35. Քանդակ

1. Պատասխանի՛ր

Ինչո՞վ է նկարը տարբերվում քանդակից։

Նկարը հարթ է։

Քանդակը կարելի է բոլոր կողմերից դիտել։

2. Ծեփի՛ր

- Պլաստիլինով կերտի՛ր առյուծի արձանիկ։
- Ինչպե՞ս ես կերտելու նրա բաշը։

Հին Եգիպտոսում կավով գետաձիու փոքրիկ արձանիկներ էին կերտում։ Արձանիկների մարմնի վրա գեղեցիկ ծաղիկներ էին նկարում։

3. Պատրաստի՛ր

- Ի՞նչ ձևեր ունի գետաձին։
- Գետաձիու փոքրիկ արձանիկ կերտի՛ր։
- Գետաձիու մարմնի վրա սրածայր ձողիկով քերծի՛ր ծաղիկ։



36. Ինչի՞ց է պատրաստվում քանդակը։

Քանդակագործները քանդակները տարբեր նյութերով են քանդակում։ Դրա համար հարմար են քարը, փայտը, կավը, մետաղը և նաև, հազար ու մի անպետք իրեր։

1. Դիտարկի՛ր

- Գուշակի՛ր, թե ինչից է պատրաստված կապիկի գլուխը։
- Ի՞նչ ձև ունի բվի գլուխը։
- Ի՞նչ ձևի են ցլի ոտքերը։

Կավը և պլաստիլինը քանդակագործական նյութեր են:
Կավը չորանում է և հեշտությամբ ներկվում:
Պլաստիլինը չի ներկվում:

2. Կերտի՛ր

Պլաստիլինով կերտի՛ր կենդանու պատկեր:
Մանրամասների համար օգտագործի՛ր այլ գույնի պլաստիլին:

3. Կերտի՛ր

- Կավով կերտի՛ր կենդանու քանդակ:
- Նուրբ մանրամասները հատի՛ր քարթերով:
- Քանդակը գունավորի՛ր գուաշի ներկով:

37. Ապլիկացիա

1. Դիտարկի՛ր

Ի՞նչ ես նկատել։

Սա ապլիկացիա է՝ գունավոր թղթերով ստեղծված պատկեր։

- Ինչպիսի՞ ձևեր ես տեսնում։
- Ի՞նչ են հիշեցնում դրանք։
- Գտի՛ր երկրաչափական պատկերներ և բնական ձևեր։

Անրի Մատիս

Անրի Մատիս

Անրի Մատիս

2. Դիտարկի՛ր

- Ի՞նչ ձևեր է օգտագործել նկարիչը ֆոնի համար:
- Ինչի՞ ես նմանեցնում սպիտակ ձևերը:

3. Պատրաստի՛ր

Ստեղծի՛ր ապլիկացիա «Ստորջրյա աշխարհը»:
Ի՞նչ արարածներ են ապրում ծովում:

- Գունավոր թղթերի վրա նկարի՛ր բնական ձևեր և կտրի՛ր-հանի՛ր:
- Ձևերը նմանեցրո՛ւ ծովի բնակիչներին:
- Փակցրո՛ւ ձևերը մուգ ֆոնի վրա:

38. Թղթե քանդակ

1. Պատրաստի՛ր

Ըստ նմուշների ստվարաթղթից պատրաստի՛ր կենդանիների ֆիգուրներ։



2. Պատրաստի՛ր

Շրջակա միջավայրի փոքրիկ մոդել։

- Պատրաստի՛ր կենդանիների երկու կամ երեք ֆիգուրներ։ Ինչպիսի՞ միջավայրում են ապրում քո կենդանիները։
- Կենդանուն տեղավորի՛ր հարմար միջավայում։
- Ըստ նմուշի կտրի՛ր-հանի՛ր մոդել և նկարազարդի՛ր։
- Մոդելին փակցրո՛ւ հատակ։
- Վրան դասավորի՛ր կենդանիները։





Ի՞նչ սովորեցի

Դիորամա «Կենդանիների աշխարհ»

Ստվարաթղթե արկղի մեջ կազմակերպի՛ր կենդանիների համար համապատասխան միջավայր.
պինգվինների համար՝ ձյուն, ուղտի համար՝ ավազոտ անապատ ...

- Տուփի պատերին նկարի՛ր կամ ապլիկացիայով պատրաստի՛ր բնանկար:
- Օգտագործի՛ր բնության մեջ գոյություն ունեցող ձևեր:
- Տուփի մեջ տեղավորի՛ր ստվարաթղթե կամ պլաստիլինի կենդանիներին:

Աշխատանքը ցո՛ւյց տուր ընկերներիդ և պատմի՛ր.

- Ի՞նչ կենդանիներ ես պատրաստել:
- Որտե՞ղ են ապրում քո կենդանիները:
- Ինչո՞վ և ինչպե՞ս ես պատրաստել կենդանիների քանդակները:
- Ինչպիսի՞ միջավայր է քո բնապատկերում:
- Ինչո՞վ և ինչպե՞ս ես ստեղծել բնապատկերը:
- Ի՞նչ ձևեր ես օգտագործել:

օազիս

գյուղ

ծով



անապատ

անտառ



Արկտիկա

Հիշենք

Պատկերացնո՞ւմ ես բանաստեղծություն առանց բառերի:
Կա՞ երաժշտություն առանց հնչյունների:

Նկարչության մեջ գիծը, գույնը և ձևը նույնն են, ինչ բառը բանաստեղծության մեջ, իսկ երաժշտության մեջ՝ հնչյունը:

?

2. Պատասխանի՛ր

- Ինչպիսի՞ գծեր ես տեսնում:
- Ի՞նչ կարող է անել գիծը:

3. Դիտարկի՛ր

Թվարկի՛ր գույները։



4. Պատասխանի՛ր

Ի՞նչ կարող է անել գույնը։

5. Դիտարկի՛ր

Անվանի՛ր ձևերը։



6. Պատասխանի՛ր

Ի՞նչ գույնի ձևեր կան նկարում։

Ես արդեն գիտեմ

Ինչ կարող են անել մատիտը,
պաստելը, ներկը և նշիչները:

Գծերը պատմություններ են պատմում:
Գիծը կարող է լինել զայրացած և բարի,
չարաճճի ու հանգիստ:

Ես գիտեմ, թե ինչ կարող են անել գույները.
գույները կարող են գունավորել նկարը, ստեղծել
թախծոտ կամ ուրախ տրամադրություն:

Ես գիտեմ, թե ինչում է մեզ օգնում ֆոնը.
ֆոնը ցույց է տալիս, թե ինչ է կատարվում
պատկերի շուրջը և հետևում:

- Ես արդեն գիտեմ, թե ինչպես օգտագործեմ տարբեր նյութեր։
- Ես գիտեմ դիմանկարներ և բնանկարներ նկարել։
- Ես սովորեցի ապլիկացիա պատրաստել։
- Ես կենդանիներ եմ պատրաստել պլաստիլինից և ստվարաթղթից։
- Պատրաստեցի ամանորյա զարդարանքներ։

- Ինձ ամենաշատը դուր եկավ...
- Ինձ մոտ լավ է ստացվում ...

Պատրաստի՛ր

- Պայմանավորվե՛ք, թե ով ինչ կնկարի։
- Նկարե՛ք մարդ, տուն, բույս կամ կենդանի։
- Գունավորե՛ք և կտրե՛ք-հանե՛ք ձեր նկարները։
- Նկարները կոկիկ դասավորե՛ք մեծ թղթի վրա։
- Այնպես փակցրե՛ք, որ ստացվի մեկ մեծ նկար։
- Նկարի համար անվանում ընտրե՛ք։